



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 125

15 օգոստոսի 2013 թվական

ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ՀՐ. ՇԱՀԻՆՅԱՆ 214 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՕՏԱՐՄԱՆ ԵՎ ՆՐԱ ՆԿԱՏՄԱՍԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՃԱՆԱՉՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 32 հոդվածի 17 կետով և հիմք ընդունելով Մարալիկ համայնքի ավագանու 28 հունիսի 2013 թվականի թիվ 30-Ն որոշումը, Մարալիկի քաղաքապետարանի աճուրդային հանձնաժողովի 15 օգոստոսի 2013 թվականի թիվ 6^ա որոշումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Մարալիկ քաղաքի Հր. Շահինյան 214 հասցեում գտնվող անհատական բնակելի տուն կառուցելու նպատակով (ծածկագիր 08-003-0022-0053) 400 քառ. մ ընդհանուր մակերեսով հողատարածքի աճուրդային եղանակով 140720 (մեկ հարյուր քառասուն հազար յոթ հարյուր քսան) դրամ արժեքով վաճառքում հաղթող ճանաչել Արսեն Ավագյանին և ճանաչել նրա սեփականության իրավունքը:

2. Արսեն Ավագյանի հետ օրենքով սահմանված կարգով կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր:

ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝

Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ